րեւ զամենայն հասակ, և զամենայն շէնքն հրով այրեալ և յատակեալ՝ և հրամայեաց, զի նախ՝ 'ի սրբութիւնն սկսանիցին՝ այսինքն 'ի կայսերական եկեղեցիսն սրբոցն Պետրոսի և Պօղոսի, և սուրբ Փրկչին, և սուրբ Աստուածածնին. և կացեալ յաւուրս ինչ՝ գնաց: Իսկ զայլ տեղիս եւս աւերեալ 'ի ճանապարհին յանկարծամահ սատակեցաւ. աւուրց ինչ յետոյ՝ էջ կայծակ յերկնից և այրեաց զմնացեալ շէնքն Հռօմայ քաղաքին. և ուրախութիւն յոյժ եղև բարբարոսաց. 'ի սորին Արկադէոսի ամն վերջին՝ հիմնարկեցաւ քաղաքն Վենէտիկ՝ ձեռամբ և բնակութեամբ Գորովացւոց, որք են Խլոնացիք. զոր յետ աւերման քաղաքին խուրեա՛նց՝ էանց Ո.Գ.Ճ՛. ամ՝ որ աստ և անդ բնակէին. և յետոյ եկին 'ի Վենէտիկ, և շինեցին զնա յետ Քրիստոսի Գ.Ճ՛Թ.. ամին:

Ոնորիոս՝ որդի մեծին Թէոդոսի՝ և եղբայր Արկադէոսի՝ սկսաւ յամի Տեառն

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան